# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № 2-ՔՎ-13

## ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

**(Կազմակերպությունների համար)**

**ք. Երևան** 06 02 2013թ.

«Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ ջրամատակարար), ի դեմս Գլխավոր տնօրեն Պ. Լորենի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, մի կողմից, և ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունը (այսուհետ՝ բաժանորդ), ի դեմս վարչության պետ Հ. Հարությունյանի, մյուս կողմից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ու խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոններով (այսուհետ՝ կանոններ), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Ջրամատակարարը իր ջրամատակարարման համակարգին միացված ցանցի (կամ ընդհանուր օգտագործման ծորակի) միջոցով, սույն պայմանագրի հավելված 1-ով սահմանված վայրերում, բաժանորդին մատակարարում է սահմանված ստանդարտների պահանջներին համապատասխանող խմելու ջուր (այսուհետ ջուր) և իր ջրահեռացման համակարգով հեռացնում կեղտաջրերը, իսկ բաժանորդը օգտագործում է մատակարարված ջուրը, կենցաղային և արտադրական կեղտաջրերը լցնում ջրահեռացման համակարգ ու հաշվարկված ջրի և հեռացված կեղտաջրերի դիմաց վճարումը պայմանագրով սահմանված կարգով վճարում ջրամատակարարին:

1.2 Բաժանորդը ընդունում է պայմանագրի ստորագրման օրվա դրությամբ ջրամատակարարի կողմից մատակարարված ջրի դիմաց իր պարտքը 1 107 621.51 դրամ, որը պարտավորվում է մարել:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Կողմերը պարտավորվում են ղեկավարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կանոններով և սույն պայմանագրով:

2.2 Ջրամատակարարը պարտավորվում է՝

2.2.1 ու յուրաքանչյուր ջրամատակարարման դեպքում ապահովել բաժանորդի անընդհատ ժամային ջրամատակարարումը (եթե պայմանագրով սահմանված չէ ջրամատակարարման այլ ժամանակացույց).

2.2.2 Բաժանորդից իր սեփականության ջրահեռացման համակարգ ընդունել կենցաղային և արտադրական կեղտաջրերը.

2.2.3 ապահովել կողմերի սեփականության սահմանագծում տվյալ գործող ջրամատակարարման համակարգերի սահմանազատման կետում մատակարարվող ջրի որակը՝ ըստ գործող ստանդարտների պահանջների և ապահովել կեղտաջրերի հեռացումը.

2.2.4 անհապաղ տեղեկացնել բաժանորդին իր համակարգում տեղի ունեցած վթարների ու խափանումների մասին և դրանց վերացման հնարավոր սեղմ ժամկետում, եթե ջրամատակարարման ընդհատումը պայմանավորված է կանոնների 36-րդ կետով, 45-րդ կետի «ա» և «գ» ենթակետերով նախատեսված դեպքերով.

2.2.5 ջրամատակարարման, կեղտաջրերի հեռացման սակագների փոփոխման դեպքում դրա մասին առնվազն մեկ ամիս առաջ տեղեկացնել բաժանորդին.

2.2.6 բաժանորդի պահանջի դեպքում 5-օրյա ժամկետում ներկայացնել ջրի որակը հավաստող փաստաթուղթ (հրաշխիք).

2.2.7 Բաժանորդի պատվերով և նրա միջոցների հաշվին կատարել նրա ներքին ցանցում ջրաչափի տեղադրման և կնիքի դրման աշխատանքներ.

2.2.8 Բաժանորդի մոտ ջրաչափի ճիշտ աշխատանքի նկատմամբ կասկած առաջանալու և համապատասխան դիմում ներկայացվելու դեպքում 10-օրյա ժամկետում կատարել ջրաչափի ստուգում.

2.2.9 ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափաքանակներին համապատասխան, իսկ ջրաչափի առկայության դեպքում ջրաչափի ցուցմունքներին համապատասխան, հաշվարկել և բաժանորդին ներկայացնել նրա կողմից օգտագործված ջրի և հեռացված կեղտաջրերի դիմաց վճարման ենթակա գումարի չափը՝ մինչև յուրաքանչյուր ամսվան հաջորդող ամսվա 7-ը:

2.3 Բաժանորդը պարտավորվում է՝

2.3.1 մատակարարված ջրի և կեղտաջրերի հեռացման վարձը վճարել վճարման փաստաթղթերում սահմանված 7-օրյա ժամկետում.

2.3.2 չխոչընդոտել ջրամատակարարի ներկայացուցչի մուտքն իր տարածք՝ ծառայողական վկայականը ներկայացնելու դեպքում՝ տեղադրված ջրաչափի ցուցմունքները գրանցելու, կանոնների համաձայն չափագիտական վիճակը ստուգելու, ինչպես նաև ջրամատակարարի և այլ բաժանորդների օգտագործած խմելու ջրի ծավալների նկատմամբ կասկածներ առաջանալու դեպքում՝ ստուգումներ կատարելու համար.

2.3.3. Իրենց տնտեսությունում, կենցաղային կեղտաջրերի հեռացման կամ դրանց ու պատշաճ կատարման, ջրաչափի անսարքության, կապարակնիքի խախտման նկատմամբ կասկածներ առաջանալու դեպքում դրանց մասին անհապաղ տեղեկացնել ջրամատակարարին.

2.3.4. ապահովել իր սեփականության ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցերի, սարքերի ու սարքավորումների պահպանությունը և դրանց շահագործումը.

2.3.5. ջրամատակարարման և կեղտաջրերի հեռացման ծառայություններից հրաժարվելու դեպքում դրա մասին առնվազն մեկ ամիս առաջ գրավոր տեղեկացնել ջրամատակարարին.

2.3.6. չգերազանցել պայմանագրով սահմանված ջրաքանակը և ջրահեռացման համակարգ չլցնել կեղտաջրերի թույլատրելի ու քանակային սահմանային կոնցենտրացիաներ.

### 3. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ՋՐԻ ԵՎ ՀԵՌԱՑՎԱԾ ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Բաժանորդին մատակարարված ջրի ծավալը հաշվարկվում է ջրամատակարարի և բաժանորդի ջրամատակարարման համակարգերի սահմանազատման կետում տեղադրված ընդհանուր ջրաչափի և (կամ) բաժանորդի ներքին ցանցում տեղադրված ջրաչափի ցուցմունքների հիման վրա:

3.2. Ջրաչափի բացակայության կամ դրա անսարքության, կապարակնիքների խախտման (պոկման) դեպքում մատակարարված ջրի ծավալը հաշվարկվում է Կանոնների 24-րդ և 25-րդ կետերով սահմանված կարգով:

3.3. Օգտագործված ջրի և ջրահեռացման ծառայության բաց թողնված կենտրոնական ու տեղական կոյուղու ծավալների հաշվարկման ժամանակահատվածը համարվում է հաշվարկային ամիսը:

3.4. Բաժանորդի կողմից ջրահեռացման համակարգ լցված կենտրոնական կեղտաջրերի ծավալը հաշվարկվում է Կանոնների 26-րդ կետի համաձայն:

## 4. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Բաժանորդին մատակարարված ջրի և ջրահեռացման ծառայությունների դիմաց վճարը հաշվարկվում է բաժանորդի ջրաչափի ցուցմունքների և սպառողներից ընդունված սակագների հիման վրա, իսկ վճարումը կատարվում է բանկային համակարգով կամ փոստային բաժանմունքում՝ ջրամատակարարի բանկային հաշվին:

4.2. Պայմանագրի կնքման պահից գործում են հետևյալ սակագները՝

ա) մատակարարվող մեկ խոր.մ ջրի համար 154.47 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը),

բ) հեռացվող կեղտաջրերի մեկ խոր. մ համար 25.31 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը):

4.3. Պայմանագրի 4.2-րդ կետով նախատեսված սակագները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոփոխվելու դեպքում կիրառվում են փոփոխված սակագները:

## 5. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1. Երբ օրենսդրության կամ աշխատանքային առանձնահատուկ պայմանները պահանջում են անջատել ջրամատակարարումը, դրա մասին բաժանորդը պարտավոր է ունենալ պաշտոնական տեղեկություն:

5.2. Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների դիմաց վճարի հաշվարկների համար հիմք են ընդունվում ջրամատակարարի և բաժանորդի՝ պայմանագրի հավելված 1-ում նշված տարածքների կողմից համատեղ փոխադարձ հաշվարկների ակտերը և դրանց հիման վրա կազմված՝ իր կողմից միակողմանի հաստատված ամփոփ ակտը, ինչպես նաև հարկային հաշիվ (ամփոփ հաշիվ-ապրանքագիր) երկու օրինակից, որոնք ջրամատակարարը բաժանորդին է ներկայացնում սույն պայմանագրի 2.2.9. ենթակետում նշված ժամկետում:

5.3. Բաժանորդը, անսարքությունների բացահայտման դեպքում, պարտավոր է անհապաղ տեղեկացնել ջրամատակարարին, իսկ ջրամատակարարը պարտավոր է վերականգնել ջրամատակարարումը և կենտրոնացված կարգով կատարել վնասված մատակարարման ջրի և կեղտաջրերի հեռացման համար պայմանագրի 2.3.1. ենթակետում նշված ժամկետում:

Բաժանորդը, անսարքության դեպքում, այն երեք օրվա ընթացքում գրավոր հայտնում է ջրամատակարարին, վճարումը կատարելով ամփոփ ակտի չհիմնավորված մասով:

Կողմերը ծանուցվում են բոլոր փոփոխությունների մասին նշված հեռախոսահամարով կամ էլեկտրոնային փոստով:

5.4. Բաժանորդի սպասարկման հասցեների (ծառայությունների) անվանումը և դրանց համապատասխան տեղադրությունը՝ ջրամատակարարի սպասարկման տարածքների (ծառայությունների) ցանկը նշված է պայմանագրի հավելված 1-ում:

5.5. Լրացուցիչ պայմանները լրացնում են կողմերը, և դրանք չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Կանոններին ու պայմանագրին:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու, ոչ պատշաճ կատարելու կամ վնաս հասցնելու դեպքերում, ինչպես նաև բաժանորդի կողմից օգտագործված ջրի ծավալի նվազեցման նպատակով ջրաչափի բնականոն աշխատանքի խախտման, ջրաչափի կապարակնիքների վնասման (պոկման, կեղծման) և այլ միջամտության խախտումների հայտնաբերման դեպքերում կողմերը պատասխանատվություն են կրում և փոխհատուցում են պատճառված վնասները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ու Կանոններով սահմանված կարգով՝ բացառությամբ պայմանագրի 6.2-րդ կետում նշված դեպքերի:

6.2. Օրենքով սահմանված կարգով ֆորս-մաժորային դեպքերում ջրամատակարարման ընդհատման, ինչպես նաև բաժանորդի մեղքով իր կրած վնասի համար ջրամատակարարը պատասխանատվություն չի կրում:

6.3. Բաժանորդի կողմից ջրամատակարարի ջրահեռացման համակարգում թույլատրելի կեղտաջրերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի չափերի խախտման և վտանգավոր նյութերի կոյուղի լցման դեպքում բաժանորդը պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.4. Բաժանորդը ջրամատակարարման և ջրահեռացման համար պայմանագրի 2.3.1. ենթակետում նշված ժամանակահատվածում գումարը չվճարելու դեպքում կետանցի յուրաքանչյուր օրվա համար ջրամատակարարին վճարում է տուժանք՝ չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով:

6.5. Ջրի չնախատեսված, կենտրոնական կեղտաջրերի չնախատեսված կամ ջրամատակարարման (ջրահեռացման) պայմանավորվածությունների ոչ պատշաճ կատարման դեպքում կազմվում է խախտումների ակտ, բայց ոչ ավելի քան մեկ ամիս ժամկետով, երբ բաժանորդը պայմանագրի 2.3.3-րդ ենթակետի համաձայն հաշվիչից առանց ընթացքում առնվազն 2 ամսվա դրա մասին գրավոր տեղեկացրել է ջրամատակարարին, ինչի հիման վրա ջրամատակարարը բաժանորդին վճարում է տուժանք՝ չմատակարարված յուրաքանչյուր մեկ խոր. մետր ջրի համար՝ սակագնի եռապատիկի չափով:

## 7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:

7.2. Բանակցությունների արդյունքում փոխհամաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ու կողմերի համար պարտադիր է դառնում դրա կնքման պահից և գործում է 2 (երկու) տարի ժամկետով: Պայմանագրի գործողությունը համարվում է երկարաձգված նույն ժամկետով և պայմաններով, եթե կողմերից որևէ մեկը մեկ ամիս առաջ չի դիմում մյուս կողմին այն փոփոխելու կամ դադարեցնելու համար:

8.2. Պայմանագրի գործողության ժամկետում մատակարարվող ջրի և ջրահեռացման համակարգով հեռացվող կեղտաջրերի ծավալները ու

քաղաքացիության փոփոխման դեպքում պայմանագիրը ենթակա է փոփոխման:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

9.1. Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել առնվազն մեկ ամիս առաջ դրա մասին տեղեկացնելով մյուս կողմին, երբ՝

9.1.1. բազմիցս խախտվել են ծառայությունների մատուցման ժամկետները (երկու և ավելի անգամ)

9.1.2. բազմիցս խախտվել են ծառայությունների դիմաց վճարման ժամկետները (երկու և ավելի անգամ).

9.1.3. արտակարգ իրավիճակների դեպքում (Ֆորս-Մաժոր), երբ այն տևում է 2 ամիս և ավելի

9.2. Պայմանագրի միակողմանի լուծման մասին զգուշացում ստանալու մյուս կողմն իրավունք ունի այն վիճարկել դատական վեճ, որը լուծվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ու նորմերով սահմանված կարգով:

9.3. Պայմանագրի առանց պատճառաբանության միակողմանի լուծելու ցանկության դեպքում նախաձեռնող կողմը պարտավոր է փոխհատուցել դրա հետևանքով մյուս կողմին պատճառված վնասները:

9.4. Պայմանագրի փոփոխումը կամ վաղաժամկետ դադարեցումը կողմերին չի ազատում մինչ այդ պայմանագրով առաջացած և չկատարված պարտավորությունների կատարումից:

## 10. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

10.1. Պայմանագրով սահմանված պարտավորությունների անբավարարության կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա կատարված է ֆորս-մաժորային դեպքերի հետ, որոնք ծագել են պայմանագիրը կնքելուց հետո, և որոնք կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը:

## 11. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1. Պայմանագրով չկարգավորված և չնախատեսված հարցերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

11.2. Պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և պահպանվում են կողմերից յուրաքանչյուրի մոտ:

## 12. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐ | ԲԱԺԱՆՈՐԴ |
|---|---|
| «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ | ՀՀ Արդարադատության նախարարություն Քրեակատարողական վարչություն |
| Հասցե : ք.Երևան , Վարդանանց փակ.8ա | Հասցե : ք.Երևան, Արշակունյաց 63 |
| Բանկային հաշիվ : «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ | Բանկային հաշիվ : ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության |
| Հ/Հ 160485054425 | Հ/Հ 900011175016 |
| ՀՎՀՀ 02509667 | ՀՎՀՀ 0220472[illegible] |
| Գլխավոր տնօրեն ______ Պ.Լոբեն | Վարչության պետ ______ Հ.Հարությունյան |
| «___» __________ 2013թ | «[illegible]» [illegible] 2013թ. Կ.Տ. |

Հավելված 1
06.02.2013 թ.
№ Հ-ԲԿ-13 Պայմանագրի

ՑԱՆԿ

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ մասնաճյուղերի և ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության մարզային ստորաբաժանումների

| № | ID | «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ մասնաճյուղերի անվանումը | ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության մարզային ստորաբաժանումների անվանումը |
|---|---|---|---|
| 1 | 318767213 | ԱԲՈՎՅԱՆ | "Աբովյան" Քրեակատարողական հիմնարկ ([illegible]) |
| 2 | 352338634 | ՀՐԱԶԴԱՆ | "Հրազդան" Քրեակատարողական հիմնարկ |
| 3 | 33571428 | ԱՇՏԱՐԱԿ | "Կոշ" Քրեակատարողական հիմնարկ |
| 4 | 419430412 | ԱՐԹԻԿ | "Արթիկ" Քրեակատարողական հիմնարկ |
| 5 | 486545649 | ԳՈՐԻՍ | "Գորիս" Քրեակատարողական հիմնարկ |
| 6 | 184561876 | ՍԵՎԱՆ | "Սևան" Քրեակատարողական հիմնարկ |

**ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐ**

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն

Պ.Լոբենս

Կ.Տ

**ԲԱԺԱՆՈՐԴ**

ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչություն

Վարչության պետ

Հ.Հարությունյան

Կ.Տ